Հավելված 4
«ՀՀ ԱՄԱՔ-ԳՀԱՇՁԲ-19/04»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀ ԱՄԱՔ-ԳՀԱՇՁԲ-19/04»*

ք. Արարատ «27» օգոստոսի 2019 թ.

«Արարատ քաղաքային համայնքն», ի դեմս համայնքի ղեկավար Հայկ Հայկյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Կառույց>>Ա/Կ-ն, ի դեմս տնօրեն Տիրուն Պողոսյանի, որը գործում է Ա/Կ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված << Արարատ քաղաքի բակերի բարեկարգման >> աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ *2019թ-ի հոկտեմբերի 31-ը:*

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա)Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ)Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ)Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ)Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.
3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.
3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝
3.3.1Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:
3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝
3.4.1Աշխատանքների առնվազն --20--- տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:
3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:
3.4.3Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:
3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:
3.4.5Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
3.4.6Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:
3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:
3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ
4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __3____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:
4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝
1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.
2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.
3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.
4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝
ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,
բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.
5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է *3.500.000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ* : Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը
5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:
5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :
5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝
ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝
ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է
ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.
ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.
ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[31]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

[31] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է __5__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Արարատի քաղաքային համայնքապետարան	<<Կառույց>>Ա/Կ
ք.Արարատ Շահումյան 34	Ք.Արարատ, Կոմիտաս 2/39
Ֆին.նախ. գործառնական վարչ.	<<Հայբիզնեսբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 900422101437	Հ/Հ 11500604982549
ՀՎՀՀ 04000436	ՀՎՀՀ04100723
Համայնքի ղեկավար՝ Հ.Ա.Հայկյան	Տնօրեն՝ Ա.Մինասյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
27/08 / 2019 թ. կնքված
«ՀՀ ԱՄԱՔ-ԳՀԱՇՁԲ-19/04»* *ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*[35]

« Բակերի բարեկարգման »ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք.Արարատ , ՈԿՖ բանավան 10 և Ա/Զ 9 հասցեներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Արարատի քաղաքային համայնքապետարան
ք,Արարատ Շահումյան 34
Ֆին.նախ. գործառնական վարչ.
Հ/Հ 900422101437
ՀՎՀՀ 04000436
Համայնքի ղեկավար՝ Հ.Ա.Հայկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Կառույց>>Ա/Կ
Ք.Արարատ, Կոմիտաս 2/39
<<Հայբիզնեսբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 11500604982549
ՀՎՀՀ04100723
Տնօրեն՝Ա.Միսասյան

/ստորագրություն/
Կ.Տ

---

[35] *Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքային համայնքի ՈԿՖ բանավան 10 բազմաբնակարան շենքի բակի բարեկարգման աշխատանքների

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Չ/մ	քանակը	միավ. Գինը	Ընդ արժեքը
1	2	3	4	5	6
	Անցումներ և սալվածք				
1	Գրունտի մշակում ձեռքով եզրաքարերի հիմքերի համար	$մ^3$	5,48	1,90	10,42
2	Բետոնե հիմքերի կառուցում B - 7.5 դասի բետոնից /0,2*0,2/	$մ^3$	5,48	31,48	172,49
3	Բետոնե հավաքովի եզրաքարերի /500*200*80մմ/ տեղադրում	գ/մ	137,00	1,68	230,64
4	Ավազակոպիճով նախապատրաստական շերտի պատրաստում 15սմ / սալվածքի տակ /	$մ^3$	14,400	4,95	71,27
5	Բազալտե ավազաշերտի կառուցում 50 մմ	մ3	4,800	6,58	31,59
6	Սալահատակի պատրաստում բետանյա սալերով /երկրորդ շերտը մոխրագույն/ կարանների լցումով ցեմ. Շաղախով	մ2	96,00	5,18	497,32
	Մետաղական ցանկապատ				
1	Գրունտի մշակում ձեռքով հիմքերի համար /սյուների տակ/	$100մ^3$	0,01512	190,15	2,88
2	Կետային հիմքերի կառուցում B-7.5 դասի բետոնից /սյուների տակ/	$մ^3$	1,5120	30,73	46,46
3	Մետաղ ցկանանկապատի տեղադրում	տն	0,599	83,74	50,17
	Մետ խող D=57x2,5մմ /սյուներ/	գծմ	42,00	1,41	59,08
	Մետ խող Dy=40x2,5մմ /գոտիներ/	գծմ	170,20	1,15	195,03
	Մետ խող Dy=25,5x2,5մմ /ճաղեր/	գծմ	49,95	0,58	29,10
4	Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու անգամ	քմ	32,82	0,88	28,97
5	Բետոնե եզրաշերտի կառուցում B - 12.5 դասի բետոնից 0.15*0.20*/ ցանկապատի տակ/	$մ^3$	2,42	43,38	104,90
6	Բետոնե եզրաշերտի կառուցում B - 12.5 դասի բետոնից 0.15*0.20* /հին սալահատակի համար/	$մ^3$	0,74	43,38	32,15
	Շվաքարան- տաղավար				
1	Տաղավարի երկտակ յուղաներկում	$100 մ^2$	0,250	109,89	27,47
	Կարուսել 4 տեղանոց /1 հատ/				
1	Կառուսելի տեղադրում	տն	0,127	83,74	10,66
	Մետ խող D=159x4,0մմ	գծմ	0,70	6,51	4,56
	Մետ խող D=57x4,0մմ	գծմ	3,60	2,24	8,08
	Մետ խող D=57x4,0մմ	գծմ	0,80	2,24	1,80
	Մետ խող D=32*2.5մմ	գծմ	2,40	0,78	1,87
	Մետ խող D=20*2.5մմ	գծմ	4,00	0,52	2,07
	Մետ խող D=20*2.5մմ	գծմ	3,15	0,52	1,63
	Քառ. խող 40x20x2մմ	գծմ	11,20	0,73	8,13
	Քառ. խող 40x20x2մմ	գծմ	5,20	0,73	3,77
	Հեծան տաշտաձև պրոֆիլի, N16	գծմ	3,80	7,65	29,09
	առանցքակալ	հատ	2,00	10,31	20,63
2	Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու անգամ	քմ	5,98	0,88	5,28
	Ճոճանակ 2 տեղանոց /1հատ/				
1	Ճոճանակի տեղադրում	տն	0,058	83,78	4,87
	Մետ խող D=57x2,5մմ	գծմ	9,00	1,56	14,00
	Մետ խող D=57x2,5մմ	գծմ	2,00	1,56	3,11
	Մետ խող D=32x2,5մմ	գծմ	5,20	0,85	4,43
	Մետ խող D=32x2,5մմ	գծմ	1,00	0,85	0,85
	Մետ խող D=20x2,5մմ	գծմ	2,20	0,55	1,21
	Մետ խող D=20x2,5մմ	գծմ	2,00	0,55	1,10

	Մետ խող D=20x2,5մմ	գծմ	3,50	0,55	1,93
	Մետ խող D=20x2,5մմ	գծմ	0,50	0,55	0,28
	մետ.թիթեղ 3մմ	մ2	0,08	11,69	0,94
	առանցքակալ	հատ	4,00	5,16	20,63
2	Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու անգամ	քմ	3,12	0,88	2,75
	Նստարան /6 հատ/				
1	Նստարանի տեղադրում	տն	0,188	83,74	15,72
	Քառ. խող 40x20x2մմ	գծմ	18,60	0,73	13,50
	Քառ. խող 40x20x2մմ	գծմ	7,20	0,73	5,22
	Քառ. խող 40x20x2մմ	գծմ	17,40	0,73	12,63
	Քառ. խող 40x20x2մմ	գծմ	4,20	0,73	3,05
	Քառ. խող 40x20x2մմ	գծմ	63,00	0,73	45,72
2	Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու անգամ	քմ	13,25	0,88	11,70
	Մարզաձող 2 տեղանոց				
1	Գրունտի մշակում ձեռքով հիմքերի համար /սյուների տակ/	100մ^3	0,00450	190,15	0,86
2	Կետային հիմքերի կառուցում B-7.5 դասի բետոնից /սյուների տակ/	մ^3	0,45000	30,73	13,83
3	Մետաղ էլեմենտների տեղադրում	տն	0,054	83,74	4,53
	Մետ խողDH=76x4մմ /սյուներ/	գծմ	5,00	3,01	15,04
	Մետ խողDH=76x4մմ /սյուներ/	գծմ	2,00	3,01	6,02
	Մետ խող Dy=32x3,0մմ /ձողեր/	գծմ	2,20	0,95	2,08
4	Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու անգամ	քմ	1,89	0,88	1,67
	Կանաչապատում				
1	Բնահողի բարձում ա/ինք. վրա և ներկրում. 3կմ-ից 20սմ	մ^3	85,00	1,26	106,96
2	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով և փռում տարածքով	մ^3	85,00	1,90	161,63

Ընդամենը	2 163,72
Մարքավորումներ	130,08
Ընդամենը սարքավորումներ	2 033,64
13.3 % վերադիր ծախսեր	270,47
Ընդամենը	2 304,11
11 % շահույթ	253,45
Ընդամենը	2 557,56
Ամբողջը	2 687,65
1.5 % Չնախատեսված աշխատանքներ	40,31
Ընդամենը	2 727,96
20 % ԱԱՀ	545,59
Ընդամենը	3 273,55

Կազմեց՝ **Գ.Եղիազարյան**

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքային համայնքի Արարատյան զանգված 9 բազմաբնակարան շենքի բակի բարեկարգման աշխատանքների

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Չ/մ	քանակը	միավ. Գինը	Ընդ արժեքը
1	2	3	4	5	6
	Անցումներ և սալվածք				
1	Գրունտի մշակում ձեռքով եզրաքարերի հիմքերի համար	մ^3	1,01	1,90	1,92
2	Բետոնե հիմքերի կառուցում B - 7.5 դասի բետոնից /0,2*0,2/	մ^3	1,01	31,48	31,73
3	Բետոնե հավաքովի եզրաքարերի /500*200*80մմ/ տեղադրում	գ/մ	25,20	1,68	42,43
4	Ավազակոպիճով նախապատրաստական շերտի պատրաստում 15սմ / սալվածքի տակ /	մ^3	5,940	4,95	29,40
5	Բազալտե ավազաշերտի կառուցում 50 մմ	մ3	1,980	6,58	13,03
6	Սալահատակի պատրաստում բետանյա սալերով /երկրորդ շերտը մոխրագույն/ կարանների լցումով ցեմ. Շաղախով	մ2	39,60	5,18	205,14
	Մետաղական ցանկապատ				
1	Գրունտի մշակում ձեռքով հիմքերի համար /սյուների տակ/	100մ^3	0,00828	190,15	1,57
2	Կետային հիմքերի կառուցում B-7.5 դասի բետոնից /սյուների տակ/	մ^3	0,8280	30,73	25,44
3	Մետաղ ցանկանակապատի տեղադրում	տն	0,350	83,74	29,28
	Մետ խող D=57x2,5մմ /սյուներ/	գծմ	23,00	1,41	32,35
	Մետ խող Dy=40x2,5մմ /գոտիներ/	գծմ	101,20	1,15	115,97
	Մետ խող Dy=25,5x2,5մմ /ճաղեր/	գծմ	29,70	0,58	17,30
4	Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու անգամ	քմ	19,16	0,88	16,91
5	Բետոնե եզրաշերտի կառուցում B - 12.5 դասի բետոնից 0.15*0.20*/ ցանկապատի **տակ/**	մ^3	2,42	43,38	104,90
6	Բետոնե եզրաշերտի կառուցում B - 12.5 դասի բետոնից 0.15*0.20* /հին սալահատակի **համար/**	մ^3	0,74	43,38	32,15
	Շվաքարան- տաղավար				
1	Շվաքարանի մետաղյա կարկասի նորոգում	տն	0,14921	151,16	22,55
2	Մետաղական քառակուսի 40*40*2մմ խողովակ գոտի	մ	24,00	0,97	23,22
3	Մետաղական քառակուսի 40*40*2մմ խողովակ նստարանի կարկաս	մ	4,50	0,97	4,35
4	Մետաղական քառակուսի 30x30x2մմ խողովակ նստարան	մ	40,00	0,73	29,15
5	Տանիքի ծածկի կառուցում հարթ.ցինկ.թիթեղից 0,60 մմ հաստ	100 մ^2	0,128	402,94	51,49
6	Տաղավարի երկտակ յուղաներկում	100 մ^2	0,187	109,89	20,57
	Կարուսել 4 տեղանոց /1 հատ/				
1	Կառուսելի տեղադրում	տն	0,127	83,74	10,66
	Մետ խող D=159x4,0մմ	գծմ	0,70	6,51	4,56
	Մետ խող D=57x4,0մմ	գծմ	3,60	2,24	8,08
	Մետ խող D=57x4,0մմ	գծմ	0,80	2,24	1,80
	Մետ խող D=32*2.5մմ	գծմ	2,40	0,78	1,87
	Մետ խող D=20*2.5մմ	գծմ	4,00	0,52	2,07
	Մետ խող D=20*2.5մմ	գծմ	3,15	0,52	1,63
	Քառ. խող 40x20x2մմ	գծմ	11,20	0,73	8,13
	Քառ. խող 40x20x2մմ	գծմ	5,20	0,73	3,77
	Հեծան տաշտաձև պրոֆիլի, N16	գծմ	3,80	7,65	29,09
	առանցքակալ	հատ	2,00	10,31	20,63
2	Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու անգամ	քմ	5,98	0,88	5,28
	Ճոճանակ 2 տեղանոց /1հատ/				
1	Ճոճանակի տեղադրում	տն	0,058	83,78	4,87
	Մետ խող D=57x2,5մմ	գծմ	9,00	1,41	12,66
	Մետ խող D=57x2,5մմ	գծմ	2,00	1,41	2,81
	Մետ խող D=32x2,5մմ	գծմ	5,20	0,78	4,05
	Մետ խող D=32x2,5մմ	գծմ	1,00	0,78	0,78

	Մետ խող D=20x2,5մմ	գծմ	2,20	0,52	1,14
	Մետ խող D=20x2,5մմ	գծմ	2,00	0,52	1,04
	Մետ խող D=20x2,5մմ	գծմ	3,50	0,52	1,81
	Մետ խող D=20x2,5մմ	գծմ	0,50	0,52	0,26
	մետ.թիթեղ 3մմ	մ2	0,08	10,59	0,85
	առանցքակալ	հատ	4,00	5,16	20,63
2	Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու անգամ	քմ	3,12	0,88	2,75
	Նստարան / 3 հատ/				
1	Նստարանի տեղադրում	տն	0,094	83,74	7,86
	Քառ. խող 40x20x2մմ	գծմ	9,30	0,73	6,75
	Քառ. խող 40x20x2մմ	գծմ	3,60	0,73	2,61
	Քառ. խող 40x20x2մմ	գծմ	8,70	0,73	6,31
	Քառ. խող 40x20x2մմ	գծմ	2,10	0,73	1,52
	Քառ. խող 40x20x2մմ	գծմ	31,50	0,73	22,86
2	Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու անգամ	քմ	6,62	0,88	5,85
	Կանաչապատում				
1	Բնահողի բարձում ա/ինք. վրա և ներկրում. 3կմ-ից 20սմ	$մ^3$	20,00	1,26	25,17
2	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով և փռում տարածքով	$մ^3$	20,00	1,90	38,03

Ընդամենը	1 119,04
Մարքավորումներ	127,65
Ընդամենը **սարքավորումներ**	991,39
13.3 % վերադիր ծախսեր	131,86
Ընդամենը	1 123,25
11 % շահույթ	123,56
Ընդամենը	1 246,81
Ամբողջը	1 374,45
1.5 % Չնախատեսված աշխատանքներ	20,62
Ընդամենը	1 395,07
20 % ԱԱՀ	279,01
Ընդամենը	1 674,08

Կազմեց՝ **Գ.Եղիազարյան**

Հավելված թիվ 2
27/08 / 2019 թ. կնքված
«ՀՀ ԱՄԱՔ-ԳՀԱՇՁԲ-19/04» ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՑԻՆ ԳՐԱՖԻԿ
« Բակերի բարեկարգման »ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Արարատ քաղաքի ՈԿՖ բանավան 10 հասցեի բակի բարեկարգման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրից	31/10/2019թ
2	Արարատ քաղաքի Ա/Զ 9 հասցեի բակի բարեկարգման աշխատանքներ	Պայմանագրի կնքման օրից	31/10/2019թ
3			
4			
5			
...			
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արարատի քաղաքային համայնքապետարան
ք,Արարատ Շահումյան 34
Ֆին.նախ. գործառնական վարչ.
Հ/Հ 900422101437
ՀՎՀՀ 04000436
Համայնքի ղեկավար՝ Հ.Ա.Հայկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Կառույց>>Ա/Կ
Ք.Արարատ, Կոմիտաս 2/39
<<Հայբիզնեսբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 11500604982549
ՀՎՀՀ04100723
Տնօրեն՝ Ա.Մինասյան

/ստորագրություն/
Կ.Տ

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> պունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N 3
27/08 / 2019 թ. կնքված
«ՀՀ ԱՄԱՔ-ԳՀԱՇՁԲ-19/04» ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231270	« Բակերի բարեկարգման աշխատանքներ	... %	...	...	...	...	...	. %	1.400.000	2.100.000	2.800.000	3.500.000	...	3.500.000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Արարատի քաղաքային համայնքապետարան
ք,Արարատ Շահումյան 34
Ֆին.նախ. գործառնական վարչ.
Հ/Հ 900422101437
ՀՎՀՀ 04000436
Համայնքի ղեկավար՝ Հ.Ա.Հայկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Կառույց>>Ա/Կ
Ք.Արարատ, Կոմիտաս 2/39
<<Հայբիզնեսբանկ>>ՓԲԸ
Հ/Հ 11500604982549
ՀՎՀՀ04100723
Տնօրեն Ա.Միհանյան

/ստորագրություն/
Կ.Տ